

ՀԱՎՈՐ ՍԱՌԻԿՅԱՆ (1872—1945)

Ա. Յ. ԲԱԴԱՅԱՆ

Տասնամյակներ շարունակ գիտնականների տեսադաշտից դուրս են մնացել անցյալի հասարակական-քաղաքական նշանավոր բազմաթիվ գործիչները նրանցից մեկը Հակոբ Սառիկյանն է։ Գրականության մեջ նրա մասին կարելի է գտնել միայն հետևյալը. «...նախկին քահանա, բազմափորձ ուսուցիչ, թարգմանիչ»¹։ Բարեբախտաբար պահպանվել է Հ. Սառիկյանի թողոնը², որից տեղեկանում ենք նրա հասարակական, քաղաքական, գրական, մասնավորապես՝ թարգմանական բուռն գործունեության մասին։

Հակոբ Սառիկյանը ծնվել է 1872 թ. դեկտեմբերի 20-ին Ղազախի վերին Աղղան գյուղում (այժմ՝ Իջևանի շրջանում), «ազնիվ աշխատավոր», քարտաշ Արղումանի³ ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստացել է Երեւմանի թեմական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որտեղ հայոց լեզվի ուսուցիչ էր նրա մորեղբայրը՝ Սարգիս Բեկ-Նազարյանը։ Այստեղ ևս նա ապրում էր մորեղբոր տանը, որը հանձն էր առել Վերան մարդ գործնելու։ Բայց փոքրիկ Հակոբի կյանքը ծանր էր. նա քաղցած էր մնում, նրան ծեծում էին ու ծառայի տեղ բանեցնում։ Միակ բանը, որ նա հիշում է ջերմությամբ և որը կարևոր դեր է ունեցել նրա աշխարհայացքի ձևավորման գործում, քեռու տան երեկոներն էին, որոնց հաճախ ներկա են եղել Ղ. Աղայանը, Պ. Պոռչյանը (որ դասավանդում էր Հակոբին), Գր. Արծրունին, Բաֆֆին և ուրիշ անվանի մտավորականները։ Հակոբն ազատությամբ ականջ էր դնում նրանց վեճերին, որոնք վերաբերում էին Արևմտյան Հայաստանին, հայոց կաթողիկոսի և ուսական ինքնակալության հարաբերություններին, հայկական դպրոցների փակմանը և այլ հարցերի։ Սառիկյանն իր «Հիշատակարանում»⁴ պատմում է, թե ինչպես ձեռնափայտը Բաֆֆուն մատուցելիս համբուրել է նրա ձեռքը և թե ինչպես է ժամերով գնացել Գր. Արծրունու հետևից՝ չհամարձակվելով մոտենալ նրան։ Հենց այդ ժամանակներում էլ սկսվեց հայ հասարակայնության ավելի ու ավելի լայն շերտեր ընդգրկող՝ «Մշակի» և «Նոր դարի» վեճը, որին Սառիկյանն իր «Հիշատակարանում» նվիրել է բազմաթիվ էջեր։ Կղերականության արատների դեմ մղվող պայքարում անողոր Գր. Արծրունին առաջացնում էր Ներսիսյան դպրոցի սաների հիացմունքը։ Սառիկյանի վկայությամբ՝ դրպրոցն ավարտելուց հետո նրանցից շատերը համագործակցեցին «Մշակին»։

Զդիմանալով մորեղբոր տան ծանր պայմաններին, որոշ ժամանակ անց Հակոբը հեռանում է այնտեղից՝ ցանկանալով թողնել դպրոցը և որպես աշակերտ տեղավորվել կոշակարի արհեստանոցում։ Տեղեկանալով նրա մտադրությունների մասին, դպրոցի ուսուցիչները նյութապես օգնում են նրան։ Շուտով Հ. Սառիկյանին հրավիրում են մասնավոր դասեր տալու Բաֆֆու որդիներին։

Ընկերների փոքր խմբի հետ Հակոբը դպրոցում հրատարակում է «Հուլյս» ձեռագիր թերթը, ոչի խմբագիրն ու փոստատարն էր միաժամանակ, հիմ-

1 Տե՛ս, օրինակ, Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հ. Ե, Երևան, 1948, էջ 494։

2 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Հ. Սառիկյանի թողոն թ. 4 (1888—1940)։

3 Իր գրական կեղծանունների շարքում օգտագործել է նաև հոր անունը։

4 ԳԱԹ, Հ. Սառիկյանի թ. թ. 4։

նում է գրադարան, կազմակերպում դասախոսություններ, որոնց ընթացքում քննարկվում էին արգելված գրքեր: Սակայն շուտով, դպրոցի տեսչի նախա-գործարարության հետո, գրադարանը վտանգի ենթարկելու վախից աշակերտները դադարեցնում են իրենց գործունեությունը: Ընդհանրապես ներսիսյան դպրոցի մասին Սառիկյանը մեծ ջերմությամբ է գրում «Հիշատակարանում»: Այդ դպրոցն էր, որ նրան ներշնչեց ազգային ոգի, սեր հարազատ երկրի, դրականության և լեզվի հանդեպ, հետաքրքրություն աշխարհի և գիտության նկատմամբ, ձգտում դեպի հայ գյուղը:

Սառիկյանի հետ ներսիսյան դպրոցում սովորում էր նաև Սեդրակ Ճուղուրյանը (հետագայում՝ Հարություն քահանա), որն ըստ Սառիկյանի՝ «ուարձավ գյուղի մասին օրող հաջողակ գրողներից»⁵: Ավելի ուշ նրանց շաղկապեցին աշխարհայացքի ընդհանրությունը և ստեղծագործական համատեղ աշխատանքը:

1350 թ. դպրոցն ավարտելուց հետո, մանկավարժական խորհուրդը երեք շրջանավարտի, այդ թվում նաև Հակոբ Սառիկյանին երաշխավորում է ուսումը շարունակելու էջմիածնի ճեմարանում: Սակայն, ճեմարանի ծանր պայմաններին չդիմանալով, Սառիկյանը հեռացավ էջմիածնից: Այդ ժամանակաշրջանի նրա ամենաջերմ հիշողությունները կապված են Գր. Արծրունու էջմիածնի դպրոցի հետ: Նորդարական ոգով տրամադրված վերակացուներն աշակերտներին փակի տակ դրեցին, բայց վերջիններին հաջողվեց միջանցք դուրս գալ՝ «կեցցե՛ Արծրունին» բացականչություններով: Նշենք, որ Սառիկյանը Գր. Արծրունու հանձնարարությամբ հետագայում գյուղի վերաբերող մի քանի թղթակցություն է գրում, որոնք հրապարակվեցին «Մշակի» էջերում: Շուտով նա դարձավ թերթի մշտական թղթակիցը: Ստորագրում էր՝ Հ. Սառիկյան, Արտավազ, Օտարական:

Շուտով Սառիկյանը ստանձնում է Գեղարու գյուղի ծխական դպրոցի ուսուցչի պաշտոնը: Սակայն ուսուցչության առաջին իսկ օրերից նա զղաց, որ այդ աշխատանքի համար ինքը չունի ո՛չ գործնական և ո՛չ էլ տեսական պատրաստություն: Այդ իսկ պատճառով կարճ ժամանակում ծանոթանում է Յան Ամուս-Կամենսկու, Պետալոցցու, Պ. Ուշինսկու, Ֆարմակուսկու և այլոց մանկավարժական աշխատություններին: Ուսուցչական աշխատանքին զուգընթաց՝ Սառիկյանը գրադրում է նաև թարգմանություններ, թարգմանում է «Համառոտ ձեռնարկ դասավանդել պատրաստվողների համար» (որ հրատարակվում է միայն 1895 թ.), հույն փիլիսոփա Դիոգենեսի և Մոնտեզագոյի «Բախտ և աշխատանք» գրքերը: Ինչպես հնարավոր եղավ պարզել, այդ ժամանակաշրջանի նրա թարգմանությունների ցանկը լրացնում են Վ. Լուկեկիչի երկու վեպերը⁶, որոնց մասին անմիջապես գրական գրախոսություններ հայտնվեցին «Մուրճ» հանդեսում⁷:

1895 թ. փետրվարի 14-ին Գեղարուից Հ. Թումանյանին ուղղած նամակում Սառիկյանը պատմում է ուսերեկից հայերեն թարգմանելու ընթացքում կրած դժվարությունների մասին և նրան խնդրում լրացնել բաց թողնված բառերն ու արտահայտությունները⁸: 1895 թ. փետրվարի 24-ին Թումանյանին ուղղած մի այլ նամակում նա գրում է. «...գրքի մանրամասնությունների մասին, եթե չեմ սխալվում, տեղեկացրել եմ առաջին նամակում»⁹: Ցավոք, պահպանված նամակներում չի նշվում, թե խոսքը ոչ գրքի թարգմանության մասին է: Սառիկյանը Թումանյանին գրել է ևս մի նամակ՝ Դ. Աղայանի 25-ամյա մանկավարժական գործունեության առիթով (7. IV. 1895, Գեղարու): Այստեղ նա գարմանք է հայտնում, որ նշանավոր գրողի և

⁵ Նույն տեղում:


⁶ Վ. Լուկեկիչ, *Բանաստեղծություններ*, Սանկտ-Պետերբուրգ, 1903, և ուրիշ վաղիկներ, Թիֆլիս, 1905:

⁷ Մուրճ, 1903, № 11, էջ 200, 1905, № 9, էջ 184:

⁸ ՉԱԹ, Հ. Թումանյանի թ. 59, № 574—577:

⁹ Նույն տեղում:

մանկավարժի հոբելյանը առնելու հոգսը ներսիսյան դպրոցն իր վրա չի վերցնում, և Թումանյանին խնդրում է միջամտել ու օգնել լուծելու այդ խնդիրը։ Միաժամանակ նա խնդրում է շուտափույթ տեղեկացնել արջյունքների մասին, քանի որ մերժման դեպքում կովկասում աշխատող 600 ուսուցիչներն իրենք կարող են կազմակերպել այդ հանդիսությունները¹⁰։



Ուշադրության են արժանի Սառիկյանի դատողությունները այդ ժամանակաշրջանի հայ ուսուցչի մասին։ «Հիշատակարանում» նա գրում է, որ ուսուցիչը գավառում և՛ վարժապետ է, և՛ դերասան, և՛ քարոզիչ, և՛ զենք տեղափոխող, և՛ կազմակերպիչ, և՛ առաջնորդ՝ գյուղի բոլոր առաջավոր ուժերը համախմբող։ Բացի ուսուցչից էլ ո՞վ կար գյուղում. քահանան, նա արդեն կորցրել էր ոտքի տակի հոգը. գյուղական տանուտերը, դատավորը, գրագիրը. նրանք բոլորը շահագործողներ և մակարդյուններ էին։ Մնում էր միայն «ծակ գրպանով» և «դատարկ քսակով» վարժապետը, որը գյուղացու

¹⁰ Նույն տեղում։

որդուն ոչ միայն «մարդ էր դարձնում», այլև նրան ծանոթացնում էր գրքերի, թատրոնի հետ: Գյուղացին նրան անվերապահորեն հավատում և վստահում էր: Գյուղացու խնդիրների վերհանման, մամուլի էջերում դյուզի կյանքի, գյուղացու ցավերի ու հոգսերի լուսաբանման ողջ ծանոթությունը ուսուցչի վտիա ուսերին էր: Ժողովրդին անհրաժեշտ պահին նա կարող էր գնալ բանտ և աքսոր: Եթե քահանան իբրև եկեղեցու ներկայացուցիչ էր մասնակցում ժողովրդի տխրությանն ու ուրախությանը, ապա հայ ուսուցիչը ցանկալի հյուր էր, սիրելի ընկեր: Նա համարվում էր քահանայի վտանգավոր հակառակորդը, պահաս ատելի չէր նաև տեղական պաշտոնյաների համար: Հետագայում Սառիկյանը սահմանազատում է 1896 թ. առաջ և հետո ընկած տարիների ուսուցիչներին՝ «...այսպիսի ուսուցիչ եղել է մինչև 1896 թիվը... այժմ գյուղական ուսուցիչը միշտ մի լինովնիկ, մի ցեց, մի վաշխառու է»¹¹:

Բայց, ըստ Սառիկյանի, ամենացավալին այն էր, որ «հայ գրականությունը ոչ մեկին այնչափ չի մոռացել, որքան ուսուցչին: Գրական ոչ մի ստեղծագործության մեջ հայ ուսուցիչին իր այդ գաղափարահասարակական պորժուններով մի փայլել»¹²: Երբ 1892 թ. ամռանը խոլերայի համաճարակ բռնկվեց դուզում, Սառիկյանը այցելում էր հիվանդների տները, օգնում, խորհուրդներ տալիս: Կառավարությունը ոչինչ չէր անում:

Հենց այդ 1892 թ., Հ. Յ. Դաշնակցությունը սկսեց հզորանալ, նրա գաղափարները տարածվեցին և գավառներում մեծ համակրանքի արժանացան: Սառիկյան, խորամիտ և կրթված մարդ լինելով, Սառիկյանը ցավով նշում է հեղափոխական առաջնորդների անփորձությունն ու միամտությունը: Դա ճշմարտացի ներկայացրել է «Այաշկերտցի Հարություն աղա» հուզիչ պատմրվածքում¹³: Այն ժողովրդական հերոս Հունոյի (Հարություն Տեր-Մարտիրոսյան) և նրա խմբի մասին է: Ընդունելով հայ կամավորների ջոկատը՝ գյուղն անսահման ոգևորվում և ցնծում է: Սառիկյանը նկարագրում է ժողովրդական վրիժառուների երգման արարողությունը եկեղեցում՝ խորանի առջև, նաև՝ արցունքն աչքերին նրանց ճանապարհող գյուղացիներին: Ազատության և իրենց արևմտահայ եղբայրների անկախության համար պայքարի վճռականությամբ լի՝ հերոսների փոքրիկ ջոկատը զոհվում է անհավասար մարտում:

1894 թ. Սառիկյանը ավագ ուսուցչի պաշտոնով գտնվում է Սուրմալուի Կողբ գյուղում: Այաշկերտում հայերի կոտորածներ են սկսվում: Ռուսական կառավարությունը գաղթականներին, ինչպես հեգնանքով գրում է Սառիկյանը, «ռուսական հողում» չընդունելու հրաման արձակեց: Նրանց, ովքեր չարդեն եկել էին, բռնի քշում էին գյուղերից: Ահավոր և անելանելի վիճակ էր ստեղծվել. նորից Այաշկերտ վերադառնալը հավասարազոր էր մահվան: Տեղական բնակչությունն օգնության խնդրանքով կաթողիկոսի մոտ պատվիրակություն է ուղարկում: Դաժան ձմռանն ու համաճարակներին ավելանում են սպանություններն ու թալանը: Ահա այս բոլոր իրադարձությունների ազդեցության տակ կատարվում է Սառիկյանի «վերափոխումը ճեմարանականից հեղափոխականի»: Վաղարշապատում և Երևանում նա սկսում է եռանդուն մասնակցել դաշնակցականների ժողովներին:

Հայ ժողովրդի համար այդ ծանր ժամանակաշրջանում հասունանում էր նաև հարվածը հայկական դպրոցների դեմ: Ռուսական իշխանությունը առաջադրեց հայ ուսուցիչներին՝ հատուկ ծրագրով քննություն հանձնելու պահանջը: Բացի այդ, նրանք քննական հանձնաժողովին պետք է ներկայացնեին նահանգապետի տված մկայականը՝ քաղաքական բարեհուսության մասին, որը ձեռք էր բերվում Կովկասի սահմաններում: Դրով քննվելու համար դրամ էր հարկավոր: Այլ կերպ ասած՝ հայ ուսուցչությունը գլխատվում էր: Կովկասի հայոց քարեգործական ընկերության հատկացրած դրամարով

¹¹ ԳԱԹ, Հ. Ժողովրդայնի թ. 97, № 123:

¹² ԳԱԹ, Հ. Սառիկյանի թ. № 4:

¹³ Նույն տեղում. կարոն Բաքվի «Արեգ» թերթից:

(150 ու.) Սառիկյանը և երևանցի ավագ ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանը մեկնում են Ղրիմ՝ Թեոդոսիա։ Նրանց իր տանը ջերմորեն ընդունում է Հովհաննես Ավագովսկին։ Այդ ընդունման ժամանակ խորհրդային կաթողիկոսը Նոր Նախիջևանից ուղևորվում էր Պետերբուրգ՝ ցարի հետ հանդիպելու նպատակով։ Ավագովսկու հրավերով նա մտավ Թեոդոսիա, որտեղ կազմակերպվեց նրա հանդիսավոր ընդունելությունը։ Ընդունելով և լսելով Սառիկյանին ու իր Գործակալին՝ խորհրդային նրանց տեղեկացրեց, որ ուսուցիչների ընունելության հարցը շուրջ տարով հետաձգվել է, ու պահանջեց շտապ վերադառնալ «իրենց տեղերը»։

Հետգարած ճանապարհին Սառիկյանն ու նրա ընկերն իրենց առաջին պարտքն ու գործն են համարում այցելել Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ եկեղեցու բազիլիկում թաղված Միքայել Նալբանդյանի և Գամառ-Քաթիպայի՝ Ռաֆայել Պատկանյանի գերեզմաններին։ Սառիկյանը գրում է, որ երկու խոսվարար հայերի դերեզմանները Նոր Նախիջևանի և շրջակայքի հայկական ոյուղերի ազգային կյանքի հիանալի ազդակ են¹⁴։ Գամառ-Քաթիպայի և Նալբանդյանի մարտական բանաստեղծությունները, Բաֆֆու հայրենասիրական ստեղծագործությունները, զեյթունցիների երգերն այդ ժամանակ Քաստ ժողովրդական էին, նրանք թեև ծնունդ էին ողջ Հայաստանում, թափանցել էին նույնիսկ հեռավոր գավառներ, արծարծվում էին երկար դիշխներին, հարսանիքների և տխրության սեղաններին։ Այս բոլոր տրամադրությունները հայ ժողովրդի ազատագրական ձգտումների, ազգի ցավի նկատմամբ արձագանքի արդյունք էին։ Գյուղացիությունը, մտավորականությունը, նույնիսկ հոգևորականները մտնում էին քաղաքական կուսակցությունների մեջ։ Այդ ամենի ազդեցության տակ Սառիկյանը սիրով ընդունում է Թաֆթի գնացող իր երկու ընկերների առաջարկը և հոր տանը թողնելով կնոջն ու մեկուկես տարեկան որդուն, վճռում է Պարսկաստան անցնել։ Հայ գործիչների հայացքն այդ ժամանակաշրջանում ուղղվել էր դեպի Պարսկաստան, որի վերաբերմունքը հայերի նկատմամբ մնում էր դարմանալիորեն բարեհաճ, ի տարբերություն Թուրքիայի հետ համագործակցող Ռուսաստանի և այլ երկրների։ Զինված ջոկատներ կազմակերպելու նպատակով դեռևս 1890-ականների սկզբին ընտրվել էր Սալմաստի շրջանը։ Պարսկաստանում էին գտնվում հայ հեղափոխական շատ երեխայի գործիչներ, Հ. Յ. դաշակցյանը, Վերեժ Կենտրոնական կոմիտեն։ Սառիկյանն ուղևորվում է Թավրիս։ Այստեղ սկսվում է նրա կյանքի ամենահետաքրքիր ժամանակաշրջանը։ Մտեղծվել էր գեներալ պատրաստման արհեստանոց, միաժամանակ սահմանից զենք և զինամթերք էր անցկացվում։ Սառիկյանը եռանդով մասնակցում էր կազմակերպչական ներքին աշխատանքներին, զենքի գործածությունը էր սովորեցնում երիտասարդների ջոկատներին։ Օո օրի մեծանում էր հայ կամավորները հոգոր։ Սառիկյանը գրում է, որ Թավրիզն ու Սալմաստը մաքնիսթ պես ձգում էին շատերին։ Երիտասարդությունը գալիս էր բոլոր կողմերից։ Հայ հեղափոխականներին մեծ համակրանքով էր վերաբերվում պարսկական կառավարությունը։ Դաշակցյանի գինանոցի վրա ծածանվում էր պարսկական դրոշմը։ Տեղական բնակչությունը նույնպես բարյացակամ էր հայերի նկատմամբ։ Սառիկյանի համար կարևորը նաև այն էր, որ հայկաճան դպրոցներն ազատ էին ինչպես ուսումնական, նույնպես և վարչակազմ առումով։ Թավրիզի իրավա թաղում կար թատրոն, որը ժամանակին կառուցել էին Թումանյան եղբայրները։ Սառիկյանը «Հիշատակարանում» պատմում է, որ այդ թատրոնի բեմում «Պեպո» թատերգության ներկայացմանը ներկա են եղել նախավոր շատ մարտիկ, այդ թվում Պարսկաստանի գահաժառանգ Վալիաթ Մուղաֆերդիդինը։ Քանի որ ոչ ոք չէր համաձայնում խաղալ Հարություն Զիմոխովի դերը, իսկ դրա պատճառով ներկայացումը կարող էր ձախողվել, դերը ստիպված ստանձնում է Սառիկյանը։ Հարկ է ասել, որ Սառիկյանը կուսակցական զանազան հանձնարարություններ կատարելիս, հա-

14 ԳԱԹ, Հ. Սառիկյանի Թ. Պ 41

ճախ վտանգելով իր կյանքը, տարբեր գերերի մեջ էր մտնում: Այսպես, Թավրիզում գտնվելու առաջին իսկ ամսին նա համաձայնեց մասնակցել Զուլֆայից Թավրիզ գննքի և «Դրօշակի» կապոցների փոխադրման գործողությանը: Խուզարկությունների ժամանակ նա բժշկի դեր էր խաղում, մյուսները՝ նրա թիկնապահները:

Այդ շրջանում նա գրում է իր ընկերոջը նվիրված և նրա անունով վերնագրված «Զալալ»¹⁵ պատմվածքը: Այստեղ նկարագրվում են 1895—1896 թթ. ահապար ջարդի տարիներին գննքի պատրաստման և հաճախով անցկացնելու աշխատանքները: Երբ վանում, Սասունում, Կարինում, Կոստանդնուպոլսում և այլուր տեղի էին ունենում կոտորածներ ու ջարդեր, երբ մեկը մյուսից անհույս լուրեր էին գալիս Վանից, միայն գննք էր պահանջվում: Միակնալը, որտեղից հնարավոր էր գննք բերել, Պարսկաստանն էր: Ի պատասխան կոտորածի՝ ուժգնանում էր հայ կամավորների հոսքը Թավրիզ և Մալմաստ. Պարսկաստանը դարձել էր ավետյաց երկիր:

2. 3. դաշնակցության «խարխալ» զինագործարանում պատրաստված հրացանները տեղափոխվում էին Լիվալայի հիմնական պահեստ: Դրանով զբաղվում էին Սառիկյանն ու Զալալը: Հրացաններն ու փամփուշտները նրանք կապում էին իրենց մառնին, ապա վրայից վերարկու հագնում: Մի փամփուշտ իսկ չէր կորչում: Վանն փամփուշտ մի մարդու տեղ էր, — գրում է Սառիկյանը: Սկզբում պարսկական կառավարությունը դրա վրա աչք էր փակում, բայց հետո, ծավալված գործունեության մասին արդեն տեղեկացած Թուրքիայի և Ռուսաստանի ճնշման տակ, սկսեց լուրջ խռընդոտներ հարուցել: Սակայն գննքի արհեստանոցը շարունակում էր աշխատանքը, քանի որ գտնվում էր գահաժառանգ Մուզաֆֆերէդդինի հովանավորության տակ: Թավրիզում կուտակված գննքը անհրաժեշտ էր շտապ տեղափոխել Սալմաստ: Ահա այս վտանգավոր և բարդ գործողությունը հանձն է առնում կատարել Հ. Սառիկյանը: Նրանք պետք է ուղևորվեին շրջանցիկ ճանապարհներով: Պատրաստվել էին Կրկնակի հատակով արկղեր, որոնցում փաթեթավորվել էին գննք և փամփուշտներ: Նա իր հետ վերցնում է իր երկու աշակերտահիներին, որոնք խուզարկության ժամանակ պետք է ձևանային գթության քույրեր, ինքը՝ առերիկացի բժիշկ, ուղեկցող տղաներից մեկը՝ թարգմանիչ, մյուսները՝ թիկնապահներ: Ուղևորության երկրորդ օրը ջրկատր միանում է մի մեծ քարավանի, որն ուխտագնացության էր գնում Մեքքա և իր հետ տանում էր մահացածների՝ սուրբ վայրերում թաղելու համար: Ուղտատերերը զինված էին՝ արաքների հարձակումներից պաշտպանվելու նպատակով: Սակայն շուտով պարզվում է, որ ջրկատր վտանգավոր հարևանության է դատապարտել իրեն: Նրանք իրավունք չունեին առաջ ընկնելու քարավանից, որը հանգստի և նամագի համար օրվա ընթացքում երեք երկարատև կանգառ էր անում, իսկ նամագի ժամանակ պետք է կանգնեին թախծոտ դեմքերով՝ արտահայտելով վիրշտ, հարգանք և հիացմունք: Սառիկյանը գրում է, որ երբեք իրեն այնպես միայնակ ու անպաշտպան չի զգացել, որքան այսպեղ, քարավանի հարևանությամբ. «համատարած մահամեղական ծով, անժանոթ աշխարհ, ուր քրիստոնյայի ոտքը հազարից մեկ անգամ է ընկնում»¹⁶: Բարեբախտաբար, այս անգամ ևս գննքի տեղափոխման գործողությունը հաջողությամբ է պսակվում:

1897 թ. դաշնակցության հիմնական մարտական ուժը կենտրոնացվել էր Սալմաստում: Մեծ արշավանք էր նախապատրաստվում դեպի Արևմտյան Հայաստան: Ուսողմանական տարին ավարտելուն պես, 1897 թ. ապրիլի սկզբին Սառիկյանը այդ արշավանքին մասնակցելու նպատակով ուղևորվում է Սալմաստ: Արշավի պատմությունը նա գրել է «Դեպի Խանասոր» ակնար-

¹⁵ Նույն տեղում. կտրոն Բաբլի «Արև» թերթից:

¹⁶ Նույն տեղում:

կում, որ ձոնել է «Արաուլի լանջերին անթաղ ու անխաչ մնացած նահատակների սրբազան հիշատակին»¹⁷,

Խանասորի արշավանքը ուղղված էր քրդական մազրիկ ցեղի կենտրոն Խանասորի վրա և ուներ քրդերի սանձահալման ու 1896 թ. նրանց կողմից շրջապատված ու սպանված 800 վասպուրականցիների համար վրիժառու-թյան նպատակ։ Սակայն Խանասորի արշավի որոշումը ընդունվել էր մեծ դժվարությամբ, քանի որ կար ևս մի ծրագիր՝ մտնել Շատախ, գրավել Թաղ գյուղի զորանոցը, ամրապնդվել այնտեղ և ապստամբեցնել Շատախն ու Մոկսը։ Երկրորդ ծրագրի կողմնակիցները մեծ դժվարությամբ զիջեցին։ Այդ ժամանակ վանից գալիս են զենք և փամփուշտ տանելու։ Նրանց օգնելու նպատակով կազմակերպվում է 35 հոգանոց մի ջոկատ։ Նախապես դրա կազմում էր նաև Սառիկը¹⁸, որը, սակայն հրաժարվեց վան զնալուց, ասե-լով, որ թեպետ ինքը Խանասորի ծրագրի կողմնակիցը չէ, բայց քանի որ ծրագիրն ընդունվել է և մոտ է իրականացմանը, ինքը ևս պետք է մասնակցի արշավին։

Թուրքական կառավարությունը գուշակել էր հայ հայրուկների մարտա-կան գործողությունների ծրագրերը։ Սալմաստ ժամանեց վանի անգլիական հյուպատոսը, որը ցանկություն հայտնեց հանդիպել դաշնակցության ներկա-յացուցչի հետ։ Բանակցությունների մեկնեց Սառիկը։ Հայերի կարծիքով, հյուպատոսի ժամանումը նպատակ ուներ համոզելու հրաժարվել մարտա-կան գործողություններից։ Սառիկի միջոցով պատասխան տրվեց, որ հյու-պատոսի խորհուրդն իմաստ կունենար, եթե Մեծ Բրիտանիան խանգարեր Համիդի հայահալած քաղաքականությանը և ապահովեր հայ ժողովրդի ան-վտանգությունը։

Խանասոր ուղևորվող հայ կամավորների ջոկատը մինչ այդ Երկիր զնա-ցածներից ամենաստվարաթիվն էր։ Սառիկյանը գրում է, որ շատերն այդ օրը վաղուց էին երաղել, իրականանում էր ամենքի բուռն ցանկությունը. նրանք գնում էին Հայաստան՝ մեծ, սրբազան գործի հալար։

Արշավանքի նախապատրաստման աշխատանքը խստիվ բաշխված էր։ Մահլամում, ուր Սառիկի գլխավորությամբ հտնվում էր ավելի քան 100 հայ-դուկ, վարժվում էին անփորձ զինվորները։ Ընտրվել էր թվով 300 կամավոր. տրվել էին նաև զինվորական կոշիկներ, քնկատում կար քահանա, բժիշկ։ Դրոշմը, որ գործել էին Արցախի կանայք, հանձնվել էր Սառիկի ջոկատին։ Հետախուզի բերած տեղեկությունները հուսադրող էին. քրդերի առաջնորդ Շարաֆ-բեկը ճամբար էր դրել Խանասոր գյուղից ոչ հեռու գտնվող հարթա-վայրում, որ պաշտպանված էր բլուրներով, ժայռ ու լեռներով։ Գյուղի վրա իշխող Արաուլ լեռն աղատ էր։ Բոլոր զինվորներն ունեին հրաճան, մոտ 300 փամփուշտ, դաշույն, ջրով և ուտելիքով մի պայուսակ։ Հրացանների մեծ մասը «մոսին» տիպի էին, որ Ռուսաստանում նոր էին սկսել դորժածվել։ Խանասոր զնացող ջոկատի հետ էր հնչակյանների 30 հոգուց կազմած խում-բը, որն ուղևորվեց վան։

Երբ սկսվում է վերելքը, Սառիկյանը բարձունքից դիտում և այսպես է նկարագրում հայ վրիժառուներին. «Տեսարանը վեհ էր ու գերազանցորեն սքանչելի։ Մոտ 300 հոգի-հետևակ ու ձիավոր, բռնել էին ձորը։ Մշանդ զենքն ու ասպարը, դրոշակները, մայր դրոշակը «լրեծ-վրեժ» կոչով թույ-լերին անգամ գոտեպնդում էին»։ Իսկ երբ գագաթներից մեկից փայլատակեց վանա լիճը, բոլորը մի մարդու պես ծնկի եկան։ «Կարծես մեր առաջ մի հնոց էր,—գրում է Սառիկյանը,—ուր մարդիկ կենդանի-կենդանի այրվում էին ու աղաչանք-պաղատանքի ձայներ ուղղում դեպի մեզ։ Կարծես այդ հնոցում մենք տեսնում էինք արյունաշաղ ծերունիներ, լեղապատառ երեխաներ, հու-սահատ հերարձակ կանայք ու աղջիկներ։ Մեր երաղած աշխարհն էր դա։

¹⁷ Նույն տեղում. կտրոն Բաքվի «Արև» թերթից։

¹⁸ Այդ ժամանակի բոլոր պատմվածքներում Սառիկյանն իրեն այսպես է կոչում։

Մեր երիտասարդական ցնորքների առարկա Հայաստանը, որի գիրկն էինք դիմում»¹⁹։

Շարաֆ-բեկի ճամբարում կար ավելի քան 400 վրան։ Մեծ, սպիտակ դրոշով վրանը ճամբարի վերջում էր։ Որոշված էր թշնամուն մոտենալ ոչ թե հտեից, այլ առջևից՝ հտեում թողնելով Արասլի գազաթը և հանասորը։ Դա վտանգավոր վճիռ էր, բայց շոկատի հույսը հանկարծակիությունն ու արագությունն էին։ Ճամբարը պետք էր շրջապատել կիսաշրջանով, որպեսզի թշնամին չկարողանար փախչել ոչ մի կողմ, բացի հետևի ժայռից։ Պետք էր այրել վրանները, իսկ ծերերին, երեխաներին և կանանց ձեռք չտալ, ոչնչացնել միայն Շարաֆ-բեկի ընտանիքը։

Ջոկատի նահանջն ապահովելու համար հայ զինվորները գրավել էին շրջակա բոլոր բլուրներն ու ժայռերը։ Ակնարկում Սաոիկյանը մանրամասն նկարագրում է շոկատի հարձակումն ու նահանջը։ Ծանր էր հատկապես նահանջը, քանի որ քրդերի շարքերն անընդհատ համարվում էին։ Շուտով՝ սերանց ներկայությունից ամբողջ շրջակայքը սևացավ։ Քրդերն ամեն կերպ ձգտում էին գրավել բոլոր անցումները, և, այսպիսով, վանգնեցնել հայերի նահանջը։ «Հազարավոր հրացանների որոտը լցրել էր ձորը, լեռները դողում էին... Կոփվր կատաղի էր։ Մենք փամփուշտ դնել անգամ չէինք հասցնում։ Եթե լինեին մեր նոր սիստեմի հրացանները... մենք կորած էինք»։ Մարտը տեղեց մինչև մութն ընկնելը։ Ջոկատը կորցրեց 19 մարդ, չորսը վիրավորվել էին։ Ջոկատը դժվարին անցումներով վերադարձավ Սառմաստ։ Շարաֆ-բեկի վրանից հայ մարտիկները վերցրել էին սուլթանական հրովարտակը, որով Արդուլ Համիդը Շարաֆ-բեկին նշանակել էր սահմանապահ համիդիների գլխավոր, ինչպես նաև օսմանական շքանշանը, որով նա պարգևատրվել էր հայերին «հաջողությամբ ջարդելու համար»։ Հրովարտակն ու շքանշանն ուղարկեցին ժնկ՝ «Դրոշակի» խմբագրություն։ «Ըմվ թեպետ հայ մարտիկները չէին կասկածում Շարաֆ-բեկի մահվանը, — գրում է Սաոիկյանը, — հետագա տեղեկությունները չհաստատեցին Շարաֆի սպանվելը։ Փոխարենը, քրդական և եվրոպական թերթերը վկայում էին, որ քրդերը կորցրել էին առնվազն հազար հինգ հարյուր մարդ։ Սառմաստի բնակչությունը ցնծում էր։ Ուրախանում էին նաև պարսիկները, քանի որ քուրդ-մադրիկցիները երկար տարիներ նրանց հանգիստ չէին տալիս։ Սակայն շուտով վիճակը կտրուկ բարկացավ։ Պարսից կառավարությունը, ուսում և թուրք դեսպանների ու թեհ-րանից եկած հրահանգների ճնշման տակ, սկսեց հետապնդել ֆիդայիներին։ Պարսիկ ոստիկան-սարմազները խուզարկում էին տները։ Վիճակը ծանր էր նաև այն պատճառով, որ հայերը չէին ուզում ընդհարվել պարսիկների հետ։ Ռուսաստանի և Թուրքիայի ճնշումից ազատվելու համար պարսից կառավարությունը ձերբակալեց 15—20 անմեղ հայ գաղթականների և նրանց հանձնեց թուրքական իշխանություններին։ Իսկ քրդերը, պահն օգտագործելով, հարձակվեցին հայկական վար գյուղի վրա և սպանեցին 60 մարդ։ Ընկերների օգնությամբ Սաոիկյանին հաջողվում է բազմաթիվ հայ մարտիկներին անցկացնել Ռուսաստան, ապա երեք ընկերոջ հետ մեկնում է նաև ինքը։ Նրա ընկերներից մեկը Սևաբեցի Սաքոն էր, որը հիշում է. «...հենց արդ գիշերն էլ ես, Վարդանը, Սաոիկը և Բեգը նստեցինք ձիերը և Ջուլֆայով անցանք դեպի էջմիածին, որտեղ պատիվ ունեցանք ներկայանալ Վեհափառ կաթողիկոսին։ Վեհափառ Տերն ասաց. «Գնացեք, քիչ հանգստացեք, ճանճի բոժոժի նման չծակեք թռնեք դուրս»։ Համբուրեցինք Վեհափառի աջը և ճանապարհ ընկանք դեպի Թիֆլիս»²⁰։

Այդ օրերին հայ ժողովուրդը երգում էր Խանասորի արշավանքին նվիրված ցնծության մի երգ։ Աննախադեպ ուժ էր հորդում այդ երգից, նրա մեջ հնչում էր հաղթանակի հսկարությունը, հույսի ներշնչանքը։

¹⁹ ԳԱԲ, 2. Սաոիկյանի թ. № 4. Կտրոն Բաքվի «Արև» թերթից։

²⁰ Սևաբեցի Սաքոյի ինքնակենսագրությունը (Դրոշակ, Փարիզ, 1980, մարտ, № 3, (208), էջ 85)։

Նայի՛ր, հիշի՛ր, նվիրական այս օրը,
 Հուլիս ամսի 25-ին կատարեցին մեծ տօնը,
 Կարկուտ տեղաց խանասորա դաշտումը,
 Դաշնակցական Ֆիդայիներ վրեժ առան հովտումը:
 Չանցած մի ժամ մազրիկ ցեղը շարվեցավ,
 խանասորա կանաչ դաշտը կարմիր արյամբ ներկվեցավ²¹:

Անհնար է հերքել խանասորի արշավանքի բարոյական մեծ նշանակությունը, որը ծրագրվել էր հայ ժողովրդի համար հոգեբանական ծանր պահին՝ 90-ական թվականների հայկական կոտորածների վերջում, երբ դրված էր հայ ժողովրդի՝ որպես ազգի գոյատևման խնդիրը: Մինչև խանասորի արշավանք տեղի ունեցած բոլոր մարտերը պաշտպանական բնույթ ունեին, իսկ հայկական ջոկատները զինվում էին ինքնապաշտպանության նպատակով: Երեք հարյուրից ավել մարդուց բաղկացած զինված ջոկատով սահման անցնելը և անհամեմատ ավելի ուժեղ հակառակորդի վրա կատարված հարձակումը մեծ դեր խաղացին անկման ու հուսահատության վիճակում գտնվող հայ ժողովրդի ոգու բարձրացման գործում: 1897 թ. հուլիսի 25-ի՝ Հ. Յ. Դաշնակցության կազմակերպած խանասորի արշավանքը խորհրդային շրջանում գնահատվում էր որպես «արկածախնդրություն», քանի որ արշավանքի հետևանքով թուրքական կառավարությունն ուժեղացրեց բռնությունները ոչ միայն երկրի ներսում, այլ նաև հարկադրեց պարսկական կառավարությանը այնտեղ ևս խուզարկություններ կատարել և հետապնդել հայ վտարանդիներին և ազատագրական շարժման ականավոր գործիչներին²²:

խանասորի արշավանքի նկատմամբ այլ վերաբերմունք ենք տեսնում Մալխասի «Ապրումներ» գրքում, որն ավարտվում է փառաբանական այսպիսի բացականչությամբ. «Փառք խանասորի ճակատամարտին»: Արշավի նախապատրաստական աշխատանքների մեջ ներգրավված էին ամենակրթված, զինվորական գիտելիքների տեղ մարդիկ: Սրանց շարքում նա հիշատակում է 25-ամյա Հակոբ Սառիկյանին. «Նա ալ մեր հիներեն էր, փորձված, կորովի, խելոք մարդ մը: ...Իմ վրաս ուժեղ ու բանգէտ մարդու տպավորություն գործեց հայր Սառիկյանը: Հյուսիսային Կովկասի մեր ամենագործունյա ընկերներեն էր այդ քահանան, միաժամանակ եռանդուն հասարակական արժեքավոր գործիչ մը, թեև փարաջայով»:

Ըսենք, այդ ժամանակ... ներողամիտ վերաբերմունք մը կար դեռ հոգևորականներու հանդեպ, որոնց կը թույլատրվեր աղոթել, և երբեմն ապրիլ հայ ժողովրդի ցավով²³:

խանասորի արշավանքից հետո տուն վերադառնալով՝ Սառիկյանը փակ գտավ դպրոցները և մի կարճ ժամանակ գրագիր աշխատեց, ապա 1898 թ. սեպտեմբերի 23-ին Թիֆլիսի մայր եկեղեցում քահանա ձեռնադրվեց:

Այնուհետև նրա կյանքում սկսվում է բոլորովին նոր շրջան. աշխատում է Ղազախի Աղդան գյուղում (1899), Մոզդուկում (1901), Աստրախանում (1902), Վլադիկավկազում (1902—1903), նորից վերադառնում է Աստրախան, ապա երկար տարիներով հաստատվում Վլադիկավկազում: Աստրախանում և Մոզդուկում նա կրոնի և հայոց լեզվի դասեր է տալիս գաղութի դպրոցներում:

Աստրախանում շփվում է ռուս աքսորական հեղափոխականների հետ: «Որքան հեղափոխական փորձ, գաղափար, անձնվիրություն, պարզություն ու մաքրություն կար սրանց մեջ,—գրում է նա,—Չերնիշևսկիներ, Դոբրոլյուբովներ, Բելինսկիներ էին ապրում նրանց մեջ: Սրանք շատ էին տարբեր իմ մինչ այժմ տեսած ռուսներից»²⁴:

21 Հանրահայտ այս երգը գրել է արշավանքի մասնակից Գալուստ Ալոյանը:

22 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1981, հ. VI, էջ 274:

23 Մ ա լ ի ս ա, Ապրումներ, հ. Ա, Բոստոն, 1931, էջ 345, հ. Ա, Բեյրութ, 1956, էջ 342:

24 ԳԱԹ, Հ. Սառիկյանի թ. Պ 4:

Սառիկյանի վրա մեծ տպավորություն էր թողել Լ. Տոլստոյի ստեղծագործությունների մասին ժողովրդական սթափության ընկերության զահ-լիճում կայացած դասախոսությունը: Տարված լինելով ուսման մեծ գրողի ստեղծագործություններով, Սառիկյանը տարակուսանքով է լսում նրա մասին այդ ժամանակ Աստրախան աքսորված Վ. Լենինի խոսքը: «Տոլստոյին իբրև գեղարվեստագետ մեծարելուց հետո նա խիստ կերպով դատապարտեց, ջախջախեց իբրև հասարակական մտքի առաջնորդի... Նրան՝ հետադիմական, նրա քարոզները «տերտերական» անվանելով»²⁵:

Ինչպես ասացինք, Սառիկյանը երկար տարիներ հաստատվում է Վլադիկավկազում (1907—1924): Այստեղ նա զբաղվում է հասարակական և մանկավարժական եռանդուն աշխատանքով: Ս. Գր. Լուսավորչի հայկական եկեղեցու ավագանին էր, դասավանդում էր ուսումնական մի շարք հաստատություններում, հասարակական ճանաչված գործիչ էր:

Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը: 1914 թ. մինչև 1915 թ. հունվարը Սառիկյանը գտնվում է Գալիցիայի ճակատում. «Ապրիլ, զգալ էի ուզում պատերազմը: Խանասորը գլուխ էր բարձրացրել մեջս, ուզում էի անձամբ մասնակցել նրան այս անգամ ոչ թե զենքով, այլ մխիթարող, սփոփող ու հավատացնող խոսքով»²⁶: Պատերազմի մասին հուշերը նա գրել է «Ռեթ ամիս արևմտյան ճակատում» վերնագրով նոթատետրում²⁷:

Ճակատում Սառիկյանը մնում է հայ կամավոր զինվորների մոտ, ազատ ժամանակ այցելում է քաղաքային հիվանդանոցում գտնվող վիրավորներին: Լեհական քաղաքներում նա տեսնում է Թուրքիայից և Պարսկաստանից եկած շատ զաղթականներ: Սառիկյանը մեծ տազնապով էր հետևում Թուրքիայում կատարվող դեպքերին, որտեղ հայերի հալածանքն ավելի կատաղի էր դարձել: Վանից ուսական զորքի նահանջից հետո, որին հետևեց Վանի մեծ զաղթը, Սառիկյանը կորցնում է ցարիզմի հետ կապված իր հույսը. նա հիշում է, թե ինչպես 1914 թ. ձմռանը նման խաղի զոհ դարձավ Ֆակ Ալաշկերտի հայությունը: Սառիկյանի «Հիշատակարանում» տեղ են գտել Ազգային Բյուրոյի 1915 թ. ապրիլի 28-ի և Հովհաննես Արզուխյանի՝ նույն թվի մայիսի 1-ի՝ Սառիկյանին ուղղած նամակները, որտեղ Բյուրոն նրան հանձնարարում է Կովկասի հայաշատ քաղաքներում և «ստանցիաներում» կազմակերպել հայկական կոմիտեներ և այլ գործեր²⁸:

1915 թ. արևմտահայության համար եղբրական տարի եղավ: Մոսկվայում ուսերեն հրատարակվող «Армянский вестник» հանդեսում Սառիկյանը հրատարակեց «Եփրատի ափերին» պատմվածքը, որտեղ կոտորածներից փրկված հայ երիտասարդի անունից ընթերցողին պատմում է ջարդի սահմրակեցուցիչ տեսարանների մասին²⁹: 1916 թ. դարձյալ «Армянский вестник» հանդեսում լույս տեսավ «Մեր որբերը» հոդվածը՝ նվիրված հայ զաղթական որբերի ծանր վիճակին. «Մեր պատմական հայրենիքը... վեր է ածվել վշտալի հրդեհատեղի... Ինչպես ասել է Զալալ փաշան, հայերի սրտին հասցված է հավերժ այրող վերք: Հոգվածում հեղինակը կրքոտ դիմում է հղում կառավարությանը՝ զաղթականներին օգնություն կազմակերպելու խնդրանքով. «Նրանք՝ մեր դժբախտ հայրենիքի ապագա քաղաքացիները, նրանք՝ մեր ամբողջ հույսը, նրանք պետք է լինեն մեր առանձնահատուկ ուշադրության և հոգսի առարկան»³⁰:

Նույն թվականին «Армянский вестник»-ում լույս է տեսնում Սառիկյանի մի այլ հոդվածը՝ «Նա»³¹ վերնագրով՝ նվիրված Լև Տոլստոյի մահվան տարելիցին: Այն գրված է պաթետիկ ոգով: Զգացվում է, որ հոգվածի հեղի-

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ «Армянский вестник», 1916, № 39, с. 9—12.

³⁰ Նույն տեղում, 1916, № 44, էջ 29:

³¹ Նույն տեղում, 1916, № 42, էջ 5:

նակը հոգևորական է, գրողի կրոնափիլիսոփայական հայացքների համոզված հետևորդը: Տոլստոյի ստեղծագործություններին Սառփկյանը դիմել էր դեռևս 1898 թ.: Նրա առաջին թարգմանություններից մեկը՝ ռուս գրողի «Կրեյցերյան սոնատն» է⁸²: Հավանաբար, Տոլստոյի նկատմամբ հետաքրքրությամբ է թելադրված նաև այն, որ Սառփկյանը թարգմանել էր Մ. Քրիստի «Լև Տոլստոյի Կրեյցերյան սոնատի» վերջը» վիպակը⁸³, որով Քրիստը փորձել է շարունակել Տոլստոյի վիպակը: Սակայն Քրիստի երկի և այս թարգմանության մասին «Մշակ» թերթում հրատարակված գրախոսությունը բացասական էր: Գրախոսության հեղինակը (Լ. ստորագրությամբ) գտնում է, որ «վիպակն ինքնին վատը չէ, սակայն երբ դնում ես Տոլստոյի ստեղծագործության կողքին՝ ամբողջովին խամրում է: Քրիստի այս փորձիկն աշխատանքը, որ հարկ համարեց հայերեն թարգմանել Հ. Սառփկյանը, խղճալի բան է՝ գրված է ռոմանտիկ ոճով և կաթոլիկ-ուղղափառ ոգով»⁸⁴:

Հ. Սառփկյանը եղել է նաև բազմաթիվ բանաստեղծ: Վլադիկավկազից 1910 թ. դեկտեմբերի 17-ին «Սիրելի ուսուցչին» պ. Աղայանին» գրած նամակում Սառփկյանը պատմում է, թե ինչպես է գրել իր առաջին ոտաձևավորը, որը տպագրվում է «Հասկեր» հանդեսում: Այդ օրվանից Սառփկյանը սկսել է ստեղծագործել⁸⁵: Ավելի քան 50 բանաստեղծություն (1910—1933)՝ ժողովված են նրա «Խոհեր և ապրումներ»⁸⁶ բանաստեղծական տետրում: Բանաստեղծությունների գերակշիռ մասում զգացվում են անկախության համար հայ ժողովրդի պայքարի արձագանքները:

Առաջ անցնելով նշենք, որ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Հ. Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ 1919 թ. փետրվարի 21-ին Վլադիկավկազում Սառփկյանի գրած բանաստեղծությունը: Այն փորագրվել է արծաթե գավաթի վրա և «Վլադիկավկազի հասարակայնության կողմից» նվիրվել բանաստեղծին⁸⁷: Հարկ է ասել, որ հորեկյանի առթիվ հայ և օտարազգի բազմաթիվ գրողներ Թումանյանին ձուլել են իրենց սրտի խոսքը: Դրանց մեջ Սառփկյանի բանաստեղծությունը առանձնանում է խորապես հայրենասիրական ոգով:

Պահպանվել է նաև Թումանյանին ուղղված շնորհավորական չափածո հեռագիրը, որ «գաղութի անունից» գրել է «Սառփկյանց քահանան» (1919 թ., Վլադիկավկազ)⁸⁸:

Խաղաղապետում Սառփկյանը հիվանդանում է մալարիայով և 1917 թ. ամռանը ստիպված էր բուժվել Պյատիգորսկում: Պատահաբար նույն բնակարանում է հանգրվանում նաև Թումանյանն իր աղջիկների հետ: Եվ թեպետ, ըստ Սառփկյանի, «1912 թ. դաշնակցության մեծ դատից հետո» նա Թումանյանի նկատմամբ զուսպ էր վերաբերվում, այստեղ նրանք արագ մտերմանում են: «Ես մեծ հարգանքով եմ վերաբերվում ամեն մի քահանայի... Նրա շուրթերը միշտ խոսում են խաղաղության և եղբայրության մասին»,—ասում է Թումանյանը նրան⁸⁹: Իսկ Սառփկյանը գրել է. «...այդ ամբողջ ժամանակը, Հովհաննեսի հետ բարեկամության շնորհիվ, ինձ համար եղել է կատարյալ հաճույքի, հանգստի և բավականության ժամանակաշրջան»⁹⁰: 1917 թ. օգոստոսի 15-ին Սառփկյանին գրած նամակում այդ մասին խոստովանում է նաև Թումանյանը. «Ինչ լավ ստացվեց, որ այն մի քանի օրը մենք միասին անցկացրինք: Ինձ այնպես է թվում, որ ես ինչ-որ շատ թանկ բան եմ գտել: 9 է»

82 Լ. Տոլստոյ, Կրեյցերյան սոնատ, Վաղարշապատ, 1898:

83 Մ. Քրիստ, Լև Տոլստոյի «Կրեյցերյան սոնատ»-ի վերջը, Վաղարշապատ, 1898:

84 Մշակ, 24. VII. 1898:

85 ԳԱԹ, Դ. Աղայանի ֆ. 8, Ձ 591:

86 Նույն տեղում, Հ. Սառփկյանի ֆ. Ձ 4:

87 Նույն տեղում, Հ. Թումանյանի ֆ. 59, Ձ 1306:

88 Նույն տեղում, Ձ 574—577:

89 Նույն տեղում, Հ. Սառփկյանի ֆ. Ձ 4:

90 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 503:

ար մարդը, թեկուտ և մեղ համար, ամենաթանկն է՝⁴¹ Ինչպես Քումանյանին. ամպես էլ Սառիկյանին խիստ հուզում էին երկրի պատմական-հասանալիական կյանքի փոփոխությունները, հայ ժողովրդի ծանր վիճակը, նրա ճակատագիրը: Նրանք այս խնդիրների շուրջ երկարատև զրույցներ են ունեցել, ապա քննարկել դրանք իրենց նամակներում: 1917 թ. հոկտեմբերի 9-ին Պյատիգորսկից Սառիկյանին դրած նամակում բանաստեղծը ոչ պատահաբար տեղեկացնում է, որ Միքայել Նալբանդյանի արխիվը Քիֆիս տեղափոխելու նպատակով պետք է մեկնի Նոր Նախիջևան⁴², Քումանյանի մասին 1935 թ. Սառիկյանի դրած հուշերն առաջին անգամ հրատարակվեցին 1969 թ. «Քումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուում⁴³, նրանց հաջորդողները ժամանակակիցների հուշերում⁴⁴, որոշ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Սառիկյանի «Հիշատակարանում»⁴⁵:

1917 թ. Արևմտահայաստանից հայ գաղթականների զանգվածային հոսք ձեղավ դեպի Հյուսիսային Կովկաս⁴⁶, Սառիկյանը մեծապես օգնեց նրանց: Գաղթականներին տրամադրեց անգամ հայկական եկեղեցին, իսկ տեղացի հայերի՝ դրա պատճառով առաջացած դժգոհությանը պատասխանեց. «Եկեղեցին է ժողովրդի համար, և ոչ ժողովուրդը՝ եկեղեցուն»: Հարկ է նշել, որ Հակոբ Սառիկյանը ջանք ու եռանդ չի խնայել, որպեսզի Վլադիկավկազի հայությունը միշտ կապի մեջ լինի մայր հայրենիքի հետ: Այդ իսկ պատճառով, ինչպես իր «Հիշատակարանում» է գրում, Սառիկյանը «գաղութում էր հայ երեւելի գործիչների, կազմակերպում նրանց հանդիպումները տեղի հայ հասարակայնության հետ: Այսպես, հատկանշական է, որ Սառիկյանի հրավերով 1916 թ. օգոստոսի 7-ին Վլադիկավկազ է ժամանել զորավար Անդրանիկը: Նրա այցելությունը գաղութի կյանքում կարևոր իրադարձություն էր, և Սառիկյանը դրան հատկացրել է իր «Հիշատակարանի» շատ էջեր:

1920 թ. վերջերին Վլադիկավկազում էր Ս. Օրջոնիկիձեն, որը ցանկություն է հայտնում հանդիպել Սառիկյանի հետ. վերջինս այդ ժամանակ Վլադիկավկազում Հայաստանի Հանրապետության հյուպատոսն էր: Այդ հանդիպման մասին Սառիկյանը գրում է «Նախկին հանրապետության պատմության կուրսում» Մոսկվայում՝ հոգնածում, որն արդիական որոշակի հնչեղություն ունի: Այն տպագրվել է «Խորհրդային Հայաստան» լրագրում⁴⁸ և արտատպվել Փարիզի «Երևան» թերթում⁴⁷: Հանդիպման ժամանակ Օրջոնիկիձեն խնդրում է Հայաստանի կառավարությանը հաղորդել Մոսկվայի հետ բանակցություններ սկսելու անհրաժեշտությունը՝ եթե ցանկություն կա ճանաչվելու Խորհրդային Ռուսաստանի կողմից: Հայաստանի ղեկավարության հետ կապվելու անհաջող փորձից հետո Սառիկյանն անձամբ գալիս է Սրբվան: Գումարովում է արտահերթ նստաշրջան: Սառիկյանի հաղորդումից հետո որոշվում է բանակցություններ սկսել Ռուսաստանի հետ, ընտրվում են պատվիրակության նախագահն ու անդամները: Սառիկյանը գրում է, որ այդ ժամանակ քննարկվան թուրքիան թուլացած էր և հաշտություն էր առաջարկում Հայաստանին: Սկզբի պայմանագրից հայերի հրաժարվելու դեպքում թուրքերը պատրաստ էին Հայաստանին զիջել էրզրումի և Վանի նահանգները՝ հողերի մի մասը, այդ թվում նաև արգավանդ Այաշկերտը: Մոսկվան իր շահերից ելնելով, նույնն էր պնդում՝ խոստանալով իր երաշխավորությունը և նյութական աջակցությունը սովյալ Հայաստանին: Սակայն, գրում է Սա-

41 Չ. Քումանյան, Երկրի ժողովածու, հ. Ե, Երևան, 1945, էջ 428:

42 Նույն տեղում, էջ 432:

43 Քումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 503—506:

44 ԳԱԹ, Հ. Սառիկյանի թ. № 4:

45 Սառիկյանի գրառումների մեջ ճշգրիտ տեղեկություններ կան այդ ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականների քանակի մասին:

46 Խորհրդային Հայաստան, 26. III. 1926:

47 Երևան, 14. IV. 1926:

ոհիկյանը, բուլղարիկների երկարակեցությանը չհավատալու վրա հիմնված անհեռատես քաղաքականության և հույսը միայն Եվրոպայի ու Սևրի վրա դնելու հետևանքով, պատվիրակությունը արմատական քայլեր չձեռնարկեց:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև Սառիկյանի և Մ. Կալինինի հանդիպման մասին, որը կայացավ 1924 թ. մայիսի 10-ին Մոսկվայում⁴⁸: Կալինինին հետաքրքրում էր, թե արդյոք Վլադիկավկազում կուտակված հայ գաղթականները չե՞ն ցանկանում տեղափոխվել 'Լրիմ կամ Ուկրաինա: Սառիկյանից անհրաժեշտ պատասխան ստանալով, Կալինինը խոստանում է իր աջակցությունը՝ նրան հանձնարարելով ներկայացնել տեղափոխման ծախսերը, կարիքները անհրաժեշտ մանրամասն նախահաշիվները և այլն: Սառիկյանը մեծ հույսերով շտապում է Վլադիկավկազ՝ կատարելու Կալինինի հանձնարարությունը:

1924 թ. Հ. Սառիկյանը տեղափոխվում է Երևան: Իր մանկության ընկերոջը՝ Հարություն Ծուղուրյանին ուղղած նամակներից մեկում Սառիկյանը գրում է, որ Վլադիկավկազում թողել է տունը, դիրքը, պաշտոնը, Երևան եկել հանուն այն բանի, որ իր երեխաները «ճանաչեն իրենց երկիրը, սիրեն իրենց ժողովրդին, աշխատեն նրա համար»⁴⁹: Նույն թվականին նա նշանակվում է Երևանի բուլր 9 մանկատների կառավարիչ: Մտնական սաների թիվը 1250 էր: 1926 թ. Սառիկյանն ազատվում է այդ պաշտոնից, աշխատում գյուղօրհնականատում գյուղատնտեսական վարչության քարտուղար, միաժամանակ՝ սրբագրիչ «Խորհրդային Հայաստան» թերթում, որտեղ ժամանակ առ ժամանակ տպագրվում են նրա հոդվածները⁵⁰:

1928—35 թթ. Սառիկյանն աշխատում է Պետհրատում: Լայն շփումներ է ունենում հայ մտավորականության հետ: Նրա նամակներում հաճախակի հիշատակվում են Ծ. Զարենցի, Պ. Մակինցյանի, Գր. Աթաբեկյանի անունները: «Մեծ Հոկտեմբերը օրորեց, խախտեց վերից վար, աշից ձախ վարեց մեր երկիրը, հետո էլ մեր մտավորականությանը,—գրում է նա 1935 թ.,—ծանր, դառնագույն օրեր են...»⁵¹:

Սառիկյանի աշակերտները վկայում են, որ 1935—37 թթ. նա հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է եղել Բուբնովի անվան դպրոցում՝ (Կոնդրայով Ե. Ռուսթավելու անվան), ապրում էր Արամի (նախկին Սպանդարյան, 82) փողոցում: Հալածանքները նրան համարյա չդիպան: 1937—38 թթ. Սառիկյանը, իբրև նախկին քահանա, ղրկվել է դասավանդելու իրավունքից և հիմնականում զբաղվել թարգմանություններով: Մեծ եռանդով թարգմանում է Վ. Արսենևի⁵² և Ի. Տուրգենևի⁵³ վեպերը, ինչպես նաև մի քանի մանկական պատմվածք ու վիպակ⁵⁴, որոնք համահունչ էին երեխաների համար: զրուցելով իր կատակախառն պատմվածքներին⁵⁵: 1939 թ. լույս տեսավ Ն. Զեր-նիշևսկու «Ինչ անել» վեպի Սառիկյանի թարգմանությունը, որը 1953 թ. վերահրատարակվեց առանց որևէ փոփոխության: Հարկ է նշել, որ մինչև օրս սա միակ հրատարակությունն է, որ հայ ընթերցողին ներկայացնում է Զեր-նիշևսկու վեպը:

Սառիկյանը մահացավ Երևանում 1945 թ., 73 տարեկան հասակում:

48 ԳԱԲ, Հ. Սառիկյանի թ. խ 4:

49 Նույն տեղում, Հ. Ծուղուրյանի թ. 97, խ 33:

50 Տես, օրինակ, Խորհրդային Հայաստան, 22. VI. 1926:

51 ԳԱԲ, Հ. Սառիկյանի թ. խ 4:

52 Վ. Արսենև և Դերոու Ուղալա, Երևան, 1937:

53 Ի. Տուրգենև և, Ռուսին, Երևան, 1939:

54 Ի. Պատապեանկո, Ոսկե մեղալիք, Թիֆլիս, 1920, Ն. Կամենշչիկով, Տիեզերք, Երևան, 1926, Ե. Տարախովսկայա, էլեկտրական համար, Երևան, 1928, Լ. Նազարով, Խնկես աղաները սովորեցին մեքենա վարել, Երևան, 1930, Պ. Օրլովսկի, Պետական գրքեր, Երևան, 1930, Վ. Քարուզդիյա, Փոքրիկ առեղծոք Մեխալան, Երևան, 1936:

55 ԳԱԲ, Հ. Սառիկյանի թ. խ 4:

АКОП САРИКЯН (1872—1945)

А. Ц. БАДАЛЯН

Резюме

Армянский общественно-политический деятель, священнослужитель, педагог Акоп Сарикян оставил богатое наследие, в котором в полной мере отражена его жизнь и деятельность. Большой интерес представляют новые подтверждения известных исторических фактов и их оригинальная трактовка, которую дает в своих статьях и воспоминаниях А. Сарикян. Это относится, в частности, к борьбе армянских добровольческих отрядов, возглавляемых дашнакской и другими партиями в Персии (1895—1898 г.).

В дальнейшем, будучи послом Армянской Республики на Северном Кавказе, он развернул широкую общественно-политическую, литературную, педагогическую деятельность, принимал деятельное участие в судьбах армянских колоний, занимался вопросами размещения там армянских беженцев.

В середине 1920-х гг. Сарикян переезжает на родину, живет в Ереване и в основном занимается педагогической и переводческой работой.